Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2022-2023 ուստարի)
12-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է աքսորում նահատակվել Հովսեփ Վայոցձորցի կաթողիկոսը. 0,5 մ.
   ա/ 452 թ. բ/ 454 թ. գ/ 456 թ. դ/ 464 թ.
2. Ո՞վ է կառավարել Հայաստանում 2-4 թթ. 0,5 մ.
   ա/ Արիոբարզանես բ/ Վոնոն Արշակունի գ/ Էրատո դ/ Արտավազդ IV
3. Որտե՞ղ էր գտնվում Վաչուտյանների նստավայրը. 0,5 մ.
   ա/ Դվին բ/ Անի գ/ Փառիսոս դ/ Ամբերդ
4. Ո՞վ է ղեկավարել Թիֆլիսի հայերի ինքնապաշտպանությունը թաթարական հարձակումների ժամանակ. 0,5 մ.
   ա/ Նիկոլ Դուման բ/ Փարամազ գ/ Վարդան դ/ Արմեն Գարո
5. Ո՞ր թվականին է Երևանում գումարվել ՀՅԴ «ինքնավերացման» համագումարը. 0,5 մ.
   ա/ 1923 թ. բ/ 1930 թ. գ/ 1921 թ. դ/ 1927 թ.
6. Քանի՞ մետր բարձրություն ունի Արմավիրի բլուրը. 0,5 մ.
   ա/ 70 բ/ 76 գ/ 106 դ/ 88
7. Քանի՞ անդամ է ունեցել 1882 թ. Երևանում ձևավորված «Հայասեր-ազգասեր խմբակը». 0,5 մ.
   ա/ 10 բ/ 30 գ/ 60 դ/ 100
8. Ե՞րբ է Արամ Մանուկյանը նշանակվել Վանի նահանգապետ. 0,5 մ.
   ա/ 1915 թ. մայիսի 5 բ/ 1915 թ. մայիսի 15 գ/ 1915 թ. մայիսի 7 դ/ 1915 թ. ապրիլի 7
9. Ո՞ր թվականին են մոնղոլները դաշինք կնքել Կիլիկիայի հայոց Հեթում I թագավորի հետ: 0,5 մ.
10. Ո՞րն էր Միտաննի պետության մայրաքաղաքը: 0,5 մ.
11. Ո՞վ էր Առաջին աշխարհամարտում հայկական կամավորական 3-րդ ջոկատի հրամանատարը: 0,5 մ.
12. Հայոց ցեղասպանության ամենազանգվածային փուլից՝ Մեծ եղեռնից, փրկված որքա՞ն հայեր են ապաստան գտել Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի տարբեր շրջաններում: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով Գևորգ Ե կաթողիկոսի՝ հայերին պաշտպանելու խնդրանքով դիմումը ռուսական կայսրին
    բ/ Բալկանյան առաջին պատերազմի ավարտը
    գ/ Պողոս Նուբար փաշայի նշանակումը Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ
    դ/ Ռուսաստանի արտգործնախարարության կողմից մեծ տերությունների ուշադրության հրավիրումը Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների և դրանց իրագործման անհրաժեշտության վրա
    ե/ Դաշնակցության դատավարության կայացումը Պետերբուրգում
    զ/ Բալկանյան երկրորդ պատերազմի ավարտը
    է/ Փարիզի Սամվել Մուրադյան վարժարանի տեղափոխումը Վենետիկ
    ը/ Վեց տերությունների մասնակցությամբ խորհրդաժողովի սկիզբը Կ. Պոլսում
    թ/ Երիտթուրքերի հետ հարաբերությունների պաշտոնապես խզումը ՀՅԴ-ի կողմից

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Արամազդ 2. Անահիտ 3. Վահագն 4. Աստղիկ 5. Արեգ-Միհր 6. Տիր
    ա. Հերակլես բ. Արտեմիս գ. Ափրոդիտե դ. Հելիոս ե. Ապոլոն զ. Զևս

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա/ Վանի թագավորությունը հինարևելյան տիպի սահմանադրական միապետություն էր:
    բ/ 1907 թ. նոյեմբերին Բեռլինում տեղի է ունեցել Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը:
    գ/ 1908 թ. հոկտեմբերին Ալեքսանդրիայում ստեղծվել է Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը:
    դ/ 1916 թ. սկզբից մինչև ամառ ռուսական զորքերը հաջորդաբար գրավել են Խնուս, Մուշ, Բիթլիս, Տրապիզոն, Դերջան, Խարբերդ ու Դիարբեքիր քաղաքները:
    ե/ Ներսես կաթողիկոսն օրենք է սահմանել ամեն տարի Հայոց աշխարհում Վաչե Մամիկոնյանի ու նրա հետ զոհված զինակիցների հիշատակը նշելու մասին:

զ/ 372 թ. Մուշեղը, լուր ստանալով Շապուհի առաջիկա ներխուժման մասին, զորքով շարժվել է դեպի Գանձակ:
է/ 1934 թ. նոր կաթողիկոս է ընտրվել Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանը:
ը/ Սյունիքում XII դարում կար 43 ամրոց ու բերդ:
թ/ 1064 թվականից Շահ-Արմենների ամիրայության կենտրոնը Անին էր:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա/ Վանի թագավորությունում ընտանիքի խորհրդանիշ էր համարվում մայրաքաղաքի տաճարի կրակարանը:
բ/ Ուրարտուի վերնախավին երբեմն կոչում էին «Ասիայի եվրոպացիներ»:
գ/ Կոլեկտիվացման ընթացքում բռնագրավելով ունևոր գյուղացու ունեցվածքը՝ նրան ամբողջ ընտանիքով վտարում էին գյուղից՝ բնակեցնելով քաղաքում, և այս գործընթացը կոչվում էր կուլակաթափություն:
դ/ Ֆետիշիզմը հավատն է անշունչ առարկաների գերբնական հատկությունների նկատմամբ:
ե/ Քաղկեդոնականները կոչվում են նաև երկաբնակներ:
զ/ Միջնաբերդի ներսում գտնվող քաղաքի հատվածը կոչվում էր շահաստան:
է/ Կիլիկիայում արքունի քարտուղարությունը գլխավորում էր պայլը:
ը/ Արցախի և Սյունիքի մելիքություններում հազարապետը կոչվում էր նաև յուզբաշի:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ 637 թ. սեպտեմբերի 14-ին Հերակլը Խաչափայտը վերադարձրել է Երուսաղեմ:
բ/ 1216 թ. թագաժառանգի իրավունքները փոխանցվել են Լևոն II-ի դուստր Զաբելին:
գ/ 1638 թ. օսմանյան բանակը գրավել է Բաղդադը:
դ/ XV դարում Կաֆա քաղաքի 90 հազար բնակչից 56 հազարը հայեր էին:
ե/ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի երկրորդ գիրքը կոչվում է «Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց»:
զ/ 1919 թ. ապրիլի 26-ին ՀՀ խորհրդարանը հավանության է արժանացրել միացյալ Հայաստանի գաղափարը:
է/ 1921 թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանի գնդակից սպանվել է Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սայիդ Հալիմը:
ը/ Թուրքերը Ալեքսանդրապոլը վերջնականապես լքել են միայն 1921 թ. ապրիլի 22-ին:
թ/ 409-րդ հրաձգային դիվիզիան կազմավորվել է Կերչում:

1	2	3

18. Գտե՛ք, առանձին գրե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Ք.ա. 716 թ. աշնանը հյուսիսից անակնկալ հարձակվեցին քոչվոր սկյութների ցեղերը՝ ասպատակելով Վանի թագավորության տարածքները:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

... Կարգավորելով ամեն ինչ, վերցնելով մոտ տասը հազար ընտիր սպառազեն ռազմիկ, որոնց հետ նաև քահանաների դասն ու մեր սպասավորներին, մեծ ճոխությամբ ու խնջույքներով հայոց իշխանությունը վերականգնված համարելով՝ գնացինք և իջևանեցինք Գանձակ քաղաքի մոտ՝ Չոլակ կոչվող վայրում: Վախթանգ թագավորը ևս իջևանել էր քաղաքի այն կողմում... Մենք գնացինք, և նրա բանակին մոտենալու պահին իր զորքերին հրամայեց ընդառաջ գալ մերայիններին... Հրացանների ձայնից որոտում և թնդում էր այն վայրը, և նրա փոշեխառն ծուխը, ինչպես կայծակնափայլ ամպ, ծածկում էր արեգակի ճառագայթները, որ մինչև անգամ հազիվ էինք իրար տեսնում... Վախթանգը... մեզ և հրամանատար կարգված տղաներին ու մելիքներին... քաջալերեց. «Այսուհետև զորացե՛ք և քա՛ջ եղեք՝ որպես քաջարի զավակներ, և ոչ ոքից ու ոչնչից մի՛ երկնչեք, որովհետև ահա հասել է քրիստոնյաների փրկության ժամանակը»:

ա. Ո՞վ է այս տողերի հեղինակը:
բ. Չոլակ ժամանելու փոխարեն մինչև ո՞ւր հասան ռուսական զորքերը, որոնց սպասում էին հայ-վրացական զորքերը:
գ. Տողերում հիշատակվում է հայ հրամանատարների մասին, որոնցից Ավան և Թարխան հարյուրապետները որտեղի՞ց էին ժամանել Արցախ:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Քանի՞ հանդիսական էր տեղավորում Դիոնիսոսի թատրոնը Աթենքում. 0,5 մ.
   ա/ 77 հազար բ/ 17 հազար գ/ 37 հազար դ/ 57 հազար
2. Ո՞վ է հեղինակել «Անառակ որդու վերադարձը» կտավը. 0,5 մ.
   ա/ Պիտեր Բրեյգել Ավագ բ/ Ռուբենս գ/ Ռեմբրանդտ դ/ Ալբրեխտ Դյուրեր
3. Ե՞րբ է տեղի ունեցել Ադրիանուպոլսի ճակատամարտը. 0,5 մ.
   ա/ 378 թ. բ/ 410 թ. գ/ 375 թ. դ/ 385 թ.
4. Ե՞րբ է Իրանի մեջլիսը Ռեզա խանին հռչակել Իրանի շահ. 0,5 մ.
   ա/ 1928 թ. բ/ 1925 թ. գ/ 1921 թ. դ/ 1923 թ.
5. Ո՞ր թվականին են խաչակիրները գրավել Կոստանդնուպոլիսը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
   1. Ռամզես II 2. Ամենհոտեպ IV 3. Սալմանասար I 4. Թուկուլթի–Նինուրտա I
   ա. Ք.ա. 1263-1234 թթ. բ. Ք.ա. 1233-1197 թթ. գ. Ք.ա. 1279-1213 թթ. դ. Ք.ա. 1352-1336 թթ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա/ Ք.ա. XVI դարում Հուանհե գետի միջին հոսանքի շրջանում հիմնվել է առաջին խոշոր պետությունը՝ Ին հարստության գլխավորությամբ:
   բ/ Ք.ա. 442 թ. Աքեմենյան տերության մայրաքաղաք Շոշում պարսից արքայի և Աթենքի դեսպան Կալիասի միջև կնքվել է հաշտության պայմանագիր:
   գ/ Ք.ա. II հազարամյակում Հնդկաստանում ձևավորվել է այբբենական գիրը՝ բրահմին:
   դ/ Հովհան Անհողինը ստորագրել է Ազատությունների մեծ հրովարտակը, որը բաղկացած էր 63 հոդվածներից:
   ե/ Բրիտանական կայսրությունը 1919 թ. զբաղեցնում էր 47.2 մլն կմ^2 տարածք:
   զ/ Առաջին հումանիստը իտալացի բանաստեղծ Դանթե Ալիգիերին էր:
   է/ 1940 թ. հունիսի 22-ի անձնատվության պայմանագրով Ֆրանսիայի տարածքի 2/3-ը բռնազավթվել է Գերմանիայի կողմից:
   ը/ Մարշալի պլանով ԱՄՆ-ն 1948-1951 թթ. Եվրոպայի երկրներին տրամադրել է 1.4 մլրդ դոլար:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.02.2023 թ.